

## ԱՐՑԱԽՆ ԸՍՏ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ

Ուրարտական թագավորներից միակը Ռուսա I-ն էր (մ. թ. ա. 735-713 թթ.), որն արչավանք է ձեռնարկել դեպի Արցախի տարածաշրջան: Նա դրա մասին արձանագրություն է գրել տվել Սևանա լճի հարավային ափի մի ժայռի վրա՝ Ծովինար գյուղի մոտ<sup>1</sup>:

Այդ վավերագրում նշված է, որ Վանի թագավորը ծովի այս կողմի (այսինքն՝ հյուսիս-արևմտյան) երկրները նվաճելուց հետո նույն ծովի այն կողմում (այսինքն՝ հարավ-արևելյան) իրեն է հպատակեցրել տասնինը երկիր: Դրանք են՝ Գուրքումելի, Շանատուաինի, Տերիուիշաինի, Ռիշուաինի, Թարգուաինի, Արիաինի, Ջամանի, Իրքիմաինի, Ելաինի, Երիելտուաինի, Աիդամանիունի, Գուրիաինի, Ալզիրանի, Պիրուաինի, Շիլաինի, Ուիդուաինի, Ատեզաինի, Երիաինի և Ազամերունինի:

Ուրարտական գրավոր աղբյուրներում այլ վկայություններ չկան այդ երկրների աշխարհագրական դիրքն ու սահմանները որոշելու համար: Ուստի, ինչպես ընդունված է տեղագրական վերականգնողական ուսումնասիրություններում, մենք դիմում ենք այդ երկրներն ընդգրկող տարածքի, այսինքն՝ Արցախի հետագայի տեղանունների մեջ դրանց համարժեքները բացահայտելուն:

Նշված ցուցակի *Թարգուաինի* երկրի անվանման մեջ **ինի** մասնիկն ուրարտերենի ածանց է: Իսկ Թուրգուա-ն հիշեցնում է Արցախի պատմական Թառիջ/ճ բնակավայրի անունը (այժմ՝ Թալիշ):

Պետք է նկատի ունենալ, որ ուրարտական սեպագրերում *ջ* հնչյուն արտահայտող նշան չկա: Օտար տեղանունների այդ բաղաձայնը գրիչները վավերագրել են *զ* ունեցող սեպագիր վանքերի միջոցով:

---

<sup>1</sup> **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, № 389, стр. 1-14.

Օրինակ՝ Ջավախք երկրի անունը նրանք գրել են Zabab ձևով:

Իսկ Թարգուա ձևը հին հայերենի սեռական հոլովի վերջավորությամբ է: Այդ երկիրը կոչվել է Թառիջ կենտրոնի անունով:

Թառ անունով կազմված (այստեղ այն հանդես է գալիս հայ. իճճ բարբառային իջ ածանցով) մենք ունենք մի շարք հին տեղանուններ: Օրինակ՝ Թառ գյուղը Վանի նահանգում, Թառ՝ Ամասիայի շրջանում, Թառիկ՝ Խարբերդի նահանգում, Թառու՝ Երզնկայի գավառում, Թառուց՝ Հասանկալայի շրջանում և այլն:

Այս հին տեղանունները հաստատում են, որ Թառիճ/ջ բնակավայրի անունը պարունակում է հայերենի թառ արմատը, որը բացի «հավի կան թռչունների թառելու, հանգչելու տեղ» իմաստից, ինչպես նշում է Հր. Աճառյանը, նշանակում է նաև «մարդկանց բարձր տեղ ելնել, նստելը»:

Այդ տեղանվան իմաստը մատնացույց է անում, որ որ դա կրող բնակավայրը գտնվել է բարձր տեղում:

Վերը նշված Ռուսա Լ-ի ցուցակի Պիրուաինին երկրի անունը նույնպես պարունակում է -ուա սեռական հոլովի վերջավորությունը, որից հետո գրիչն ավելացրել է ուրարտերենի -ինի ածանցը: Այն Մուշի բարբառում պահպանվել է -վա ձևով: Օրինակ, Շուշվա երկիր, Լոռվա երկիր, Խաչվա երկիր (Բուլնիս-Խաչին):

*Պիրուա* - տեղանունը մենք հակված ենք նույնացնելու Ջանգելանի շրջանի Պիրինք բնակավայրի հետ, որի մեջ նույնպես առկա է **պիր** արմատը: Դա, կարծում ենք, հին հայկ. **բիր** հնդեվրոպական արմատն է, որը Ղարաբաղի բարբառում դարձել է **պիր** ու նշանակում է «գավազան, մահակ» նաև «փորելու գործիք» (հմտ. բիր-բրիչ): Տեղանվան իմաստը հուշում է, որ տվյալ տարածքում զբաղվել են հողագործությամբ: Այդ արմատը հաճախ է հանդիպում պատմական Հայաստանի այլ տեղանուններում: Օրինակ՝ Բիրալի (-ալի ածանցով)՝ գյուղ Արարատի շրջանում, Բիրան (-ան ածանցով)՝ Դիարբեքիրի շրջանում, Բիրան՝ Մուշի գավառում, Բիրան՝ Բալուի գավառում, Բիրի՝ Վանի գավառում, Բիրիք՝ Խարբերդի նահանգում և այլն: Հետևաբար, Պիրուա երկիրը Ջանդելանի շրջանն է:

*Շիլաինի* երկրի անունը, կարծում ենք, կարելի է նույնացնել Շուշիի գավառի Ալիինք բնակավայրի հետ: Ինչպես նշում է Գ. Բ. Ջահուկյանը՝ հայերենի որոշ բառերի ս հնչյունը ուրարտերենում հանդիպում ենք շ գրությամբ: Օրինակ՝ հայ. սան «կաթսա» և ուրարտ. san «աման», հայ.

ծես և ուրարտ. *šisuli*, հայ. աստեն և ուրարտ. *ištini*, հայ. մեսիմ «նվիրել» և ուրարտ. *mese* «տուրք» և այլն:

*Սիլա* - անունը պարունակում է հայ. սիլ «խաղողի հնձան» արմատը և սեռ. հոլովի -ա ցուցիչը, որն առկա է նաև Ղարաբաղի բարբառում (հմմտ. Շիրակա երկիր, Ղարսա երկիր, Երևանա երկիր բարբառային ձևերը): Այդ արմատը հանդիպում է Շատախի Սիլվան բնակավայրի անվան մեջ՝ բաղադրված վան «բնակատեղի» արմատի հետ: Դրա հոմանիշ հնձան արմատից են կազմված Վանի գավառի Զնձան, Մարտակերտի շրջանի Զնձան, Անձևացյաց գավառի Զնձանիս բնակավայրերի անունները:

*Ալզիրանիմ* հիշեցնում է Արցախի պատմական Զարջ/ճլանը\*: Այդ գավառն ըստ Ղ. Ալիշանի գտնվել է հետագայի Վարանդի կամ Դիզակի տեղում: Ինչպես վերը նշվեց, ուրարտական սեպագրերում օտար տեղանունների մեջ եղած *ջ* հնչյունը վավերացված է *z* պարունակող նշաններով: Զարջլան տեղանվան մեջ, ինչպես հաստատում է նրա հին Ալզիրանի ձևը, տեղի է ունեցել *ր* և *լ* հնչյունների դրափոխություն: Դրա տարբերակ Զարճլանը Ղարաբաղի բարբառի հետևանքն է: Իսկ բառասկզբի *հ-ն*, որպես թույլ հնչյուն ուրարտացու կողմից կարող էր չընկալվել, մանավանդ որ նրա լեզվում *հ-ն* չի եղել:

*Երիա* - երկրի անվան մեջ, կարծում ենք, առկա է հայ. **երի** արմատը, որն ունի նաև «առաջ», «լանջ» իմաստները: Այն հանդիպում է Աղիովիտի Երիշատ, Վանի նահանգի Երիք, Սիսիանի Երիստան և այլ տեղանունների մեջ: Այն հանդիպում է նաև Տավուշի շրջանի Երիծոր գյուղի անվան մեջ: Զնարավոր է, որ Երիա - երկիրը հենց Տավուշի շրջանն է: Նշված արմատը հանդես է գալիս հայ. սեռականի -ա վերջավորությամբ:

*Արիա* - երկրի անվան մեջ կարելի է առանձնացնել հայ. *հ.* - ե ծագումով արի «քաջ» արմատը: Այդ նույն բառից են կազմված Մուշի գավառի Արի, Դիարբեքիի նահանգի Արիս (-ս հոգնակի հայցականի վերջավորությամբ) գյուղերի և Պարսկահայքի Արիսի գավառի անունները:

---

\* Զալջրան տեղանունը, որը հետագայում դարձել է Զարջլան, կազմված է հայ. հնդեվր. հալ-հալվել, որը Գր. Աճառյանը կապում է հեղուկ «թափվել, խառնվել» բառի հետ և ջուր արմատներից: Տեղանունը նշանակում է «առատ կամ միախառնվող գետերով տարածք»: Այդ բառերը հանդիպում են մի շարք հայկական հին տեղանունների մեջ՝ Սյունիքի Զալիծոր (հալ+ի+ծոր), Դիարբեքիի Զալաք կամ Զալե, Զալս, Զալիալ գյուղի անունները Վանի գավառում և այլն:

Այդ արմատի քաջ հոմանիշից կազմված են Վասպուրականի Քաջբերունիք գավառի և Ախալցխայի Քաջաց քաղաքի անունները: Այդ երկրի տեղադրման համար, գուցե, հիմք կծառայի Գետաբեկի շրջանի Արիղըրան գյուղի անունը, որի արի արմատի վրա ադրբեջանցիներն ավելացրել են իրենց լեզվի դըրան «ջարդող» բառը:

*Ջամանի* երկիրը, կարծում ենք, կարելի է նույնացնել Ջողից քիչ հյուսիս գտնված այժմ ավերակ Ջաման բնակավայրի և դրա շրջանի հետ: Այդ տեղանունը կազմված է հին հայ. *զ* - նախդիրից սաստկականի իմաստով, ամալ «լցնել» բայի ամ *հ*. - *ե*. արմատից և *-ան* հոգնակերտ ածանցից:

Այդ արմատը հանդիպում է Վասպուրականի ԱՄք, Քղիի Ամառիճ, Ջևանշիրի գավառի Ամանյան, Գետաբեկի շրջանի Ջամանլի և այլ հին տեղանուններում: Դրա հոմանիշ *լի* արմատից է կազմված Բիթլիսի գավառի Լի բնակավայրի անունը: *Ջ* - սաստկական նախդիրը հանդիպում է Վանի նահանգի Ջակոս (ակոս արմատից) և Ջերվանդավան բնակավայրերի անուններում:

*Արդամանի* - երկրի անունը, կարծում ենք, կազմված է, հին հայ. *այդ* և *ամ* արմատներից՝ *-անի* ածականակերտ ածանցով:

*Այդամ* անունով մի գյուղ գտնվել է Էրզրումի նահանգի Կարաքիլիսայի գավառում: Հանդիպում են Այդի՝ գյուղ Դիարբեքիրի շրջանում, Այդի ավերակ բնակավայր Ծաղկածորի մոտ, Այդին՝ բնակատեղի Արդվինի շրջանում և այլն, որոնց անունների մեջ առկա է այդ արմատը: Վերջինս օգտագործված է «դեմ, դիմաց» իմաստով: Այդ հոմանիշով են կազմված Թալինի շրջանի Դեմ, Մարտունու դեմեր (կիկլոսյան ամրոց), Վանի նահանգի դեմին բնակավայրերի անունները:

*Այդամանի* - անունը, հնարավոր է, նշանակում է «Դեմի, դիմացի լանջերով լի»:

*Ելա* - երկրի անվան ուշ ժամանակների համարժեքը մենք չենք հանդիպում հետագայի Արցախի տեղանունների մեջ: Սակայն, կարծում ենք, այն նույնպես հայկական տեղանուն է՝ կազմված հայ. *ել* «դիք, զառիվեր» արմատից ու հանդես է գալիս սեռական հոլովածով: Այն հանդիպում է Հին Բայազետի Ելան (*-ան* ածանցով), Պարսկահայքի Ելի (գավառ), Ալավերդու շրջանի հին Ելդաղդաղ «սար» բառը թուրքերն են ավելացրել դրա վրա) և այլ տեղանուններում:

*Երիեւտուա* - երկրի անունը նույնպես կազմված է հայերենի ար-

մատներից: Ինչպես վերը նշվեց, **երի** արմատը նշանակում է «լանջ», իսկ ելը՝ «դիք, գառիվեր»: Իսկ տու «տալ» արմատը հանդիպում է Սևանի ավազանի Նորատուս (հոգնակի հայոց –ս վերջավորությամբ) և Ալիշտալի և շատ այլ հին հայկական տեղանունների մեջ:

Ի դեպ, վերջինս ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպում է Ալիշտու ձևով, որի մեջ առկա է հայ. ալիս «ալիք» բառը:

*երիելտուա* - տեղանունը վկայված է հին հայ. սեռական հոլովի -ա վերջավորությամբ ու նշանակում է «դիք լանջերով հարուստ երկիր»:

*Շանատուա* - երկրի անունը, կարծում ենք, կազմված է հայ. սան «կաթսա» (նախապես «գոգավորություն») և վերը նշված տու արմատներից **ա** հոդակապով և սեռական հոլովի -ա վերջավորությամբ: Վերևում նշվեց (Շիլա - երկրի առիթով), որ ուրարտացիները հայկական տեղանունների և բառերի ս հնչյունը իրենց արձանագրություններում փոխարինել են շ-ով:

Սան բառով են կազմված Բիթլիսի նահանգի Սան, Վանի Սանաց, Սղերդի Սանե, Թունանյանի շրջանի Սանային (=Սանահին) բնակավայրերի անունները:

Այսպիսով, Արցախը և դրան հարակից տարածքները՝ ընկած Քուռ և Արաքս գետերի միջև, ինչպես ցույց են տալիս ուրարտական սեպագիր աղբյուրներում վկայված այդ տարածաշրջանի երկրների անունների ստուգաբանությունները, դեռևս մ. թ. ա. 8-րդ դարում բնակեցված են եղել հայերով:

Կարծում ենք, մեր այս եզրակացությունները հաստատվում են նաև ուրարտական թագավոր Ռուսա I-ից (մ. թ. ա. 735-713 թթ.) ավելի քան մեկ դար հետո Դարեհի պարսկական կայսրության բաժանման մասին (մոտ մ. թ. ա. 520 թ.) Յերոդոտոսի «Պատմության» մեջ պահպանված տվյալներով:

Ըստ պատմիչի վկայության Հայկական Լեռնաշխարհի արևմտյան մասը այդ կայսրության 13-րդ նահանգն էր, իսկ արևելյան հատվածը՝ 18-րդն էր:

Վերջինիս մասին Յերոդոտոսի աշխատության մեջ գրված է. «Մատինների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու

հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»<sup>1</sup>:

Մատիեններ անունը, ինչպես պարզել են մասնագետները, Միտան-նի (այսինքն՝ Խուրրի) տերմինի հին հունական դրափոխված ձևն է: Մատիենները ըստ հին հույն պատմիչի բնակվում էին Վանա և Ուրմիա լճերից անմիջապես հարավ՝ Մեծ Ջաբ գետի ավազանում: Այն ընդգրկել է սեպագիր աղբյուրներում հիշատակված Կադուխի (=Կադեստոն), Ուրուատրի (=Արարադա երկիր՝ Կորդուք), Կունենու (վերջինից անմիջապես արևելք), Խաբխի (Կորդաքից անմիջապես հյուսիս) խուրրիական երկրները:

Ալարոդները բնակվում էին Հայկական Լեռնաշխարհի արևելյան տարածքներում, իսկ սասպերները՝ ճորոխի ավազանում:

Սակայն արևելքում 18-րդ նահանգը Դարեհի կայսրության ո՞ր վարչական միավորներին էր սահմանակցում:

Դրա մասին Հերոդոտոսի աշխատության մեջ գրված է. «Ակբատանան, Մեդիայի մնացյալ մասը, պարկանները և օթոկորյունները վճարում էին չորս հարյուր հիսուն տաղանդ». սա տասներորդ նահանգն էր:

Մեդիան, որը հետագայի Ատրոպատենեն է՝ Ատրպատականը, Երասխ գետով է սահմանակից եղել Հայաստանի հետ: Դա հաստատվում է հետագայի շատ այլ վկայություններով: Ուրեմն Հայաստանի արևելյան հատվածը՝ 18-րդ նահանգը Երասխ գետով սահմանակից է եղել Մեդիայի հետ:

Այնուհետև Հերոդոտոսի աշխատության մեջ կարդում ենք. «Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր հիսուն տաղանդ». սա տասնհինգերորդ նահանգն էր<sup>2</sup>:

Տվյալ Սակերը, որոնք Ստրաբոնի հիշատակած Սակասենեի՝ Կիրովաբադի շրջանի բնակիչներն էին, կասպերի հետ ներկայացնում էին 15-րդ նահանգը: Սակասենեն Քուռ գետով սահմանակից է եղել այդ գետի, Կովկասյան լեռների, Վրաստանի և Կասպից ծովի միջև ապրող հետագայի լեզգիական ցեղերի հետ, որոնցից մեկը վկայված է կասպեր անունով: Կարելի է եզրակացնել, որ Դարեհի վարչական բաժանման ցուցակում բոլոր լեզգիական ցեղերը համդես են գալիս դրանցից մեկի՝

---

<sup>1</sup> Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1986:

<sup>2</sup> Նույն տեղում:

Կասպից ծովի արևմտյան տարածքների բնակիչ կասպերի անունով:

Այս բոլորից հետևում է, որ 18-րդ նահանգը՝ Արևելյան Հայաստանում Քուռ գետով սահմանակից է եղել կասպերի և արևելքում սակերի հետ: Ուրեմն Արցախի տարածքը մ. թ. ա. 6-րդ դարում մտած է եղել 18-րդ նահանգի՝ Արևելյան Հայաստանի կազմի մեջ, որն իր հերթին հաստատում է, որ մ. թ. ա. 6-րդ դարի երկրորդ կեսին Արցախի տարածքը նույնպես շարունակում էր հայաբնակ լինել և մտնում էր Հայաստանի կազմի մեջ: